

**ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ  
victor-katvalyan@mail.ru*

## **ԵՂԵՌԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ**

Օսմանյան Թուրքիայի իրականացրած շարունակական ցեղասպանական քաղաքականությունը և 1915 թվի եղեռնը հայ ժողովրդին ոչ միայն զրկեցին իր պատմական հայրենիքի մեծագույն մասից, պատճառեցին մարդկային անդառնալի կորուստներ, այլ նաև ծանր հարված հասցրին քաղաքակրթական, մշակութային առումներով՝ աշխարհի երեսից ջնջելով դարերի ընթացքում իր բնօրրանում հայության ստեղծած նյութական ու հոգևոր մշակութային արժեքների մեծ մասը:

Ծանրագույն կորուստներ կրեց նաև հայոց լեզուն: 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին հայերենը ներկայանում էր աշխարհաբարի գրական երկու՝ արևելահայ ու արևմտահայ ճյուղերով և մոտ չորս տասնյակ բարբառներով<sup>1</sup>: Ընդ որում՝ թե՛ գրական արևմտահայերենը, թե՛ գրական արևելահայերենը արդեն բավականին մշակված և կանոնարկված լեզուներ էին, որոնցով ստեղծվել և ստեղծվում էր բարձրարժեք գեղարվեստական գրականություն, հրապարակվում էին հրապարակախոսական, գիտական, այլ բնույթի երկեր, պարբերականներ, կազմակերպվում էր կրթական գործ<sup>2</sup>: Ժամանակի հայ մտավորականությունը, ելնելով իրավիճակից, քննարկում էր հայերենի երկու ճյուղերը մերձեցնելու խնդիրը, ընդ որում՝ գիտակցվում էր, որ երկու տարբերակների առկայությունը լեզվական հարստության վկայություն է, ուստի տարբերակների մերձեցումը և լեզվական միասնականությունը ենթադրելու էին ոչ թե տարբերությունների իսպառ վերացում, այլ տարբերակների համընթաց և միասնական զարգացում, կանոնարկում, փոխներթափանցում ու փոխհարս-

<sup>1</sup> Աճառյան Հ., 2013, 436:

<sup>2</sup> Ջահուկյան Գ.Բ., Աղայան Է.Բ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա., 1980, 26-35:

տացում<sup>3</sup>: Հայ մտավորականները գրական լեզվի հարստացման միջոց էին համարում նաև հայերենի բարբառները, թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ իրականություններում ստեղծվում էին նաև բարբառներով գրված գեղարվեստական երկեր<sup>4</sup>:

Իր զանազան դրսևորումներով լեզվական բազմաբնույթ իրողությունների, զուգաձևությունների և ենթահամակարգերի անսպառ հարստություն էր ներկայացնում բարբառային հայերենը, որ գործառում էր ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: 1911 թվին Հ. Աճառյանը իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ վկայում է. «Հայութեան մեծագոյն մասը դեռ այսօր ալ կը գտնուի իր հայրենիքին մէջ. բայց իր հայրենիքէն դուրս տարածուած է նաև բազմաթիւ ուրիշ երկիրներու մէջ»<sup>5</sup>: Մասնավորապէս, Հ.Աճառյանը հայտնի էր Բաքու, Տալիշի, Նուխի, Զաքաթալա և այլն՝ իրենց բազմաթիվ գյուղերով), հյուսիսային Կովկասում, Թաթարստանում, Ղրիմում, եվրոպական երկրներում, Հնդկաստանում ու Պարսկաստանում, Ասորիքում ու Լիբանանում, Կիլիկիայում և այլուր<sup>6</sup>: Բուն Հայաստանից դուրս հայությունը առավել հոծ զանգվածներով բնակվում էր Փոքր Ասիայում՝ Հայաստանի արևմտյան սահմաններից մինչև Մարմարա՝ «իր մեջ պարունակելով նաև Փոքր Հայքը, որ խիստ հայաշատ շրջան մը կը կազմէ»<sup>7</sup>: Ինչպես վկայում է լեզվաբանը, Փոքր Ասիայի գլխավոր հայաբնակ քաղաքներից էին Ուրֆան, Մալաթիան, Ակնը, Արաբկիրը, Շապին-Գարահիսարը, Կյուրիներ, Տրապիզոնը, Օրդուն, Սեբաստիան, Եվդոկիան, Ամասիան, Կեսարիան, Իզմիրը, Նիկոմեդիան և այլն: Սակայն Օսմանյան կայսրությունում հայությունը թե՛ բուն հայկական տարածքներում, թե՛ այլ վայրերում ենթարկվում էր մշտական հալածանքների, կոտորածների, կրոնափոխության ու ուժացման: Արևմտահայության մշակութային ու լեզվական կենտրոն

---

<sup>3</sup> Ավետիսյան Յու., 2014, 15:

<sup>4</sup> Աճառյան Հ., 2013, 501-503:

<sup>5</sup> Աճառյան Հ., 1911, 25:

<sup>6</sup> Նույն տեղում, 25-28:

<sup>7</sup> Նույն տեղում, 29:

Պոլիսում, ըստ Հ.Աճառյանի, համիդյան կոտորածներից առաջ կար 250 000 հայ բնակչություն, մինչդեռ 1911 թվի դրությամբ հայության քանակը կազմում էր ընդամենը 180 000<sup>8</sup>: Այդ պայմաններում, հասկանալի է, աստիճանաբար սահմանափակվում էին հայերենի գործառության հնարավորությունները: Թե՛ Արևմտյան Հայաստանում և թե՛ Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում հայերենի գործառության պայմանների մասին ահա թե ինչ է գրում ֆրանսիացի նշանավոր լեզվաբան Ա.Մեյեն. «Թուրքերենը գրեթե ամենուրեք տիրող լեզու է կամ գոնե հայերենի հալածարկարևոր, մանաւանդ այժմ՝ Համիդեան վարչութեան կոտորածներից և մշտական ճնշումներից յետոյ»<sup>9</sup>: Նման իրավիճակում դեռևս նախքան եղեռնը հայության թուրքահպատակ շատ հատվածներ արդեն կորցրել էին մայրենի լեզուն և դարձել թուրքախոս: Այդ մասին բերենք Հ. Աճառյանի մի շարք դիտարկումներ. «Միջերկրականի ծովեզրերը գտնուած բոլոր հայերը տաճկախօս են: ...Փոքր Հայոց մէջ Նիքսար՝ Եւրոկիոյ հիւսիսային արևելեան կողմը, որ թրքախօս հայոց կղզեակ մը կը ներկայացնէ և արդիւնք է տեղացի բազմաթիւ թուրք տարրին զագանային բարբարոսութեան: ...Թրքախօս հայոց շրջան մ' է նմանապէս Եւրոպական Թուրքիա, Պուլղարիա և Արևելեան Ռումելի՝ սկսեալ Մարմարայի միւս երեսէն»<sup>10</sup>: Չնայած այս ամենին՝ Աճառյանը այնուամենայնիվ Օսմանյան կայսրությունում տեսնում էր հայերենի գոյատևման և զարգացման հնարավորություններ՝ փաստելով, որ Անատոլիայի գլխավոր քաղաքներում հայ նոր սերունդը դպրոցների և Պոլիս պանդխտելու շնորհիվ դարձել է հայախոս<sup>11</sup>: Ավելին, լեզվաբանը եղեռնից ընդամենը երեք-չորս տարի առաջ կայսրությունում հայերենի բնաջնջման անմիջական սպառնալիք չէր տեսնում. «Օսմանեան կառավարութիւնը՝ թէև ժամանակին բռնի միջոցներ գործադրէր է հայերէնը ջնջելու և թուրքերէնը տիրող լեզու դարձնելու համար (ինչպէս օրինակ կըսուի թէ Անատոլուի մէջ հայերէն խօսող հայոց լեզուն կտրել տուած են փաշաները), բայց

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> **Էմինեան ազգագրական ժողովածու**, 1911, XI ( ըստ՝ A.Meillet, Journal Asiatique, Paris, 1909, mai-juin, pp. 558-560 ) :

<sup>10</sup> **Աճառյան Հ.**, 1911, 31:

<sup>11</sup> Նույն տեղում, 32:

ներկայապես այդ տեսակ միջոցներու դիմելու ո՛չ մտադրութիւն և ոչ կարողութիւն ունի»<sup>12</sup>: Ժամանակը շատ արագ ցույց տվեց, թե ինչ մտադրություն ու կարողություն, հայությանը իսպառ բնաջնջելուն միտված միջոցների մեջ խտրականություն չդնելու ինչ ունակություններ ուներ օսմանյան կառավարությունը: Նահատակված միլիոնավոր հայերի հետ եղեռնին զոհ գնաց նաև նրանց շուրթերից հնչող տարատեսակ հայերենը, Արևմտյան Հայաստանն ու թուրքական կայսրության հայաբնակ վայրերը ոչ միայն հայաթափվեցին, այլ նաև հայերենագրկվեցին:

Գրական արևմտահայերենը ծվեն-ծվեն եղած սփռվեց աշխարհով մեկ և արդեն 100 տարի զրկված է միասնական գործառույթյան ու զարգացման, հետևաբար նաև՝ կանոնարկման հնարավորություններից, բարձրագույն կրթության, գիտության լեզվի իր դերից, դպրոցական համալիր ուսուցման միջոց լինելու գործառույթից: Բնական է, օտարախոս միջավայրերում արևմտահայերենը գոյատևում է համառ ջանքերի, ուժերի ամենօրյա լարման շնորհիվ: Կորսվել է նաև ընդհանուր գրական հայերենի ներդաշնակ ու համաչափ գործառույթյան ու զարգացման հնարավորությունը, երկու ճյուղերի փոխհարստացման, փոխներթափանցման ու մերձեցման խնդիրները տասնամյակներ շարունակ մնացել են չլուծված:

Աշխարհի երեսից իսպառ անհետացան բանավոր զարգացման դարերի ճամփա անցած, ժողովրդական իմաստություն ու հիշողություն ամբարած, հնչունաքերական ու բառապաշարային յուրահատուկ կազմություն ունեցող տասնյակ հայ բարբառներ, բարբառային հայերենի համակարգային դրսևորումներ: Հ.Աճառյանը եղեռնից առաջ Օսմանյան կայսրության տարածքում (ներառյալ նաև Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան) առանձնացնում էր հայերենի արևմտյան կամ Կը ճյուղի հետևյալ բարբառները. Կարնո, Խոտրջուրի, Մշո, Վանի, Տիգրանակերտի, Խարբերդի և Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Տրապիզոնի, Համշենի, Մալաթիայի, Կիլիկիայի, Սյուրիայի, Արաբկիրի, Ակնա, Սեբաստիայի, Եվդոկիայի, Ամասիայի, Օրդուի, Զմյուռնիայի, Նիկոմեդիայի, Պոլսի և Ռոտոսթոյի<sup>13</sup>: Արևմտյան Հայաստանում էր գործառում նաև Բայազետի

---

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> **Աճառյան Հ.**, 2013, 337-356: Հետազայում ուումնասիրողները կատարել են բարբառային միավորների որոշ ճշգրտումներ: Այսպես, ըստ Գ.Զահուկյանի՝ հայ

բարբառը, որը, ըստ Հ.Աճառյանի, Երևանի բարբառի ենթաբարբառ էր<sup>14</sup>, իսկ ըստ Գ.Ջահուկյանի՝ հայ բարբառների արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբի ինքնուրույն բարբառ<sup>15</sup>: Եղեռնի հետևանքով ներկայումս այս բարբառները (թերևս բացառությամբ Պոլսի և Քեսաբի բարբառների, ՎագրՖ գյուղի խոսվածքի<sup>16</sup>) այլևս իրենց բնօրրանում չեն գործառու: Ավելին, սրանցից միայն փոքր քանակությունն է, որ շարունակում է գործառել որևէ տարածքում իբրև կենդանի հաղորդակցման միջոց: Եղեռնից փրկված և այլ տարածքում ապաստան գտած բարբառային այդ միավորները հետևյալներն են.

*Կարնո բարբառ*

Բարբառային հայերենի լայնատարած այս տարբերակի կենտրոնը եղել է Կարինը: Ռուս-թուրքական պատերազմների հետևանքով այս բարբառը կրող հայ գաղթականները հաստատվել են Կարսում, Ալեքսանդրապոլում (Գյումրի), Ախալքալաքում և Ախալցխայում<sup>17</sup>: Ներկայումս Կարնո բարբառով խոսում են վերջին երեք քաղաքներում՝ իրենց շրջակա գյուղերով<sup>18</sup>:

*Սշո բարբառ*

Բարբառը տարածվում էր Վանա լճի հյուսիսային, արևմտյան և հարավ-արևմտյան ափերին: Կենտրոնն էր Մուշը: Բարբառի տարածման վայրերն էին Բաղեշ, Խլաթ, Արճեշ, Արծկե, Բուլանըղ, Մանազկերտ,

---

բարբառների արևմտյան խմբակցության մեջ են նաև Սիվրիհիսարի, Կյուրինի, Սյոյոզի, Կեսարիայի, Ասլանբեկի, Տավորիկ-Մոտկանի, Սասունի, Դիադինի բարբառները, Կիլիկիայի դիմաց առանձնացված են Հաջընի և Մարաշ-Ջեյթունի բարբառները, Սյուրիայի դիմաց՝ Քեսաբ-Սվեդիայի և Բեյլանի բարբառները, իսկ Ջմյունիայի, Նիկոմեդիայի, Ռոդոսթոյի, Օրդուի, Տրապիզոնի բարբառները ընդգրկված են Պոլսի միջբարբառի մեջ և այլն: Մակայն բոլոր դեպքերում խոսքը տարածական նույն ընդգրկման բարբառային հայերենի մասին է (**Ջահուկյան Գ.**, 1972, 132-135):

<sup>14</sup> **Աճառյան Հ.**, 1911, 37:

<sup>15</sup> **Ջահուկյան Գ.**, 1972, 135:

<sup>16</sup> Պոլսի բարբառի ներկա գործառության վերաբերյալ հավաստի տեղեկություններ չունենք: Քեսաբի բարբառը գործառում է Սիրիայի Քեսաբի շրջանում (**Չոլաքեան Յակոբ**, 2009, 9): Ինչպես վկայում է Հ.Չոլաքյանը, ՎագրՖ գյուղում մուսալեռցիները այժմ էլ պահպանում են իրենց բարբառը (**Չոլաքյան Յակոբ**, 2009., 9):

<sup>17</sup> **Աճառյան Հ.**, 1911, 104:

<sup>18</sup> **Մկրտչյան Հ.**, 1952, 7:

Խնուս, Ալաշկերտ բնակավայրերը: Ռուս-թուրքական պատերազմների հետևանքով Մշո բարբառը կրող գաղթականություն հաստատվեց Ապարանում և Սևանա լճի ափերին (Մարտունու տարածաշրջան): Ազգային հալածանքներից ու եղերական սպանողից փրկված մշեցիների խմբեր հանգրվանել են նաև Արևելյան Հայաստանի այլ վայրերում, Վրաստանում, այլ երկրներում: Ներկայումս Մշո բարբառը հաղորդակցման միջոց է հիմնականում Հայաստանի Հանրապետության Մարտունու, Ապարանի, Թալինի, Էջմիածնի, Աշտարակի, Շիրակի և այլ տարածաշրջաններում, նաև մեր երկրի սահմաններից դուրս<sup>19</sup>:

*Սասունի բարբառ*

Խոսվում էր բուն Սասունի բազմաթիվ գյուղերում: Բնակչության մի մասը թուրքական իշխանությունների կողմից սրի է քաշվել 1894, 1904 թվերին, իսկ 1915 թվին բնաջնջվել է սասունցիների մեկ այլ զանգված: Սակայն շատ սասունցիներ կարողացել են ինքնապաշտպանական կոնվներով փրկվել և անցնել Արևելյան Հայաստան, և այժմ այս բարբառը գործառում է Թալինի և Աշտարակի տարածաշրջաններում<sup>20</sup>:

*Դիաղինի բարբառ*

Խոսվում էր Դիաղինում: 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Դիաղինի բնակչությունը գաղթում է Արևելյան Հայաստան և բնակություն հաստատում Սևանա լճի հարավային ափերին: Ներկայումս այս բարբառով խոսում են Վարդենիսում<sup>21</sup>:

*Համշենի բարբառ*

Բարբառի կենտրոնը Համշեն գավառակն էր, որը ժամանակին ունեցել է ամբողջովին հայ ազգաբնակչություն, «բայց բարբառոս ու մոլեռանդ մահմետականները հայութիւնը հոն գրեթէ բնաջինջ ըրին. Տասնեակ հազարաւոր հայեր նահատակուեցան..., տասնեակ հազարաւորներ դարձան և մինչև այսօր ալ կը համարուին տաճիկ, թէև իրենց հին հայկական սովորութիւնները և պապենի հայ բարբառը կենդանի կը պահեն»<sup>22</sup>: Սրից և ուրացությունից ազատված շատ հայեր փախչելով

---

<sup>19</sup> Աճառյան Հ., 1911, 116, Բաղդասարյան-Թափալցյան Ս., 1958, 5-10:

<sup>20</sup> Պետոյան Վ., 1954, 7:

<sup>21</sup> Խաչատրյան Վ., 2004, 11:

<sup>22</sup> Աճառյան Հ., 1911, 184:

ապաստանում են Տրապիզոնում և այլուր, իսկ համիդյան ջարդերից առաջ և հետո համշենցի հայերի ստվար մի գաղթականություն անցնում է Կովկաս և հիմնվում Սև ծովի ափերին<sup>23</sup>: Այստեղ այժմ էլ Համշենի բարբառը գործառում է: Համշենցի շատ գաղթականներ էլ բնակություն են հաստատել Թուրքիայի տարբեր գավառներում: Ըստ Ս.Վարդանյանի՝ Թուրքիայի Արդվինի նահանգի Խովայի (Հովա) և Բորչքայի գավառներում (որոնցում ինքը վերջին տարիներին քանիցս շրջագայել է) կան բազմաթիվ գյուղեր, «որոնցում բնակվում են համշենցի իսլամադավան հայեր, և որոնք խոսում են հայերենի Համշենի բարբառի տեղական խոսվածքով»<sup>24</sup>: Հետազոտողի հաշվումներով՝ միայն Խովայի գավառի մոտ 34 հազար բնակիչներից շուրջ 20 հազարը 2013թ. դրությամբ համշենցի բարբառախոս հայեր են<sup>25</sup>, իսկ ընդհանրապես Ս.Վարդանյանը հանգում է այն եզրակացության, որ «մոտավոր հաշվումներով՝ այսօր Թուրքիայում բնակվում է շուրջ 35-40 հազար հայախոս իսլամ համշենահայ, որոնք իրենց անվանում են համշենցի կամ հոմշենցի»<sup>26</sup>: Մինչդեռ բուն Համշենում և Թուրքիայի այլ վայրերում տասնյակ հազարավոր իսլամադավան համշենցիներ էլ այլևս հայերեն չեն խոսում<sup>27</sup>: Շատ համշենցիներ կորցրել են ազգային ինքնագիտակցությունը և իրենց հայ չեն համարում:

#### *Բայազետի բարբառ*

Խոսվում էր Բայազետի գավառակում: 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո բայազետցիները հոծ զանգվածներով գաղթում են Արևելյան Հայաստան և բնակություն հաստատում Սևանա լճի արևելյան ափերին<sup>28</sup>: 19-րդ դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբներին Բայազետում մնացած հայությունը շարունակում է ենթարկվել հալածանքների, կոտորածների և տեղահանության: Դեպի Արևելյան Հայաստան են ձգվում գաղթականների նոր քարավաններ<sup>29</sup>: Ցեղասպանությունից հետո

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Վարդանյան Ս., 2014, 212:

<sup>25</sup> Նույն տեղում, 213:

<sup>26</sup> Նույն տեղում, 217:

<sup>27</sup> Նույն տեղում, 211-222:

<sup>28</sup> Մելքոնյան Ա., 1988, 22-23:

<sup>29</sup> Հարությունյան Հ., 2008, 137-141:

Բայազետում այլևս հայեր չեն մնացել: Բայազետի բարբառով ներկայումս խոսում են Գավառ քաղաքում և շրջակա մեկ տասնյակից ավելի գյուղերում:

Արևմտյան մնացած բարբառները այլևս գոյություն չունեն, չեն գործառում իբրև լեզվական համակարգ, հաղորդակցման միջոց: Բարբառային շատ միավորներ բնաջնջվեցին իրենց կրողների հետ միասին, անհետացան նաև հայության՝ սպանդից փրկված բեկորների բռնի կրոնափոխության և ուժացման հետևանքով: Եղեռնից մազապուրծ եղած հայության զանգվածները իրենց բարբառային խոսքը տարան ինչպես Արևելյան Հայաստան, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Աշխարհի այս կամ այն կետում թերևս դեռ կարելի է գտնել տարեցներ, ավանդապահ առանձին ընտանիքներ, որոնք պահպանել են իրենց նախնիների բնիկ խոսքի հիշողությունը կամ պատահիկներ այդ խոսքից, սակայն բնօրրանից, կենսական պայմաններից զրկված արևմտյան բարբառային խոսքը, հատվածաբար սփռվելով օտար ավերում, սերնդից սերունդ մոռացության է մատնվել ու մատնվում է այլախոս (նաև՝ հայախոս այլաբարբառ) միջավայրերում: Փաստորեն, կորստից հիմնականում փրկվել են արևմտահայ այն բարբառները, որոնք նախքան եղեռնը տեղի ունեցած բռնագաղթերի արդյունքում սկսել էին գործառել նաև Արևելյան Հայաստանում ու Կովկասում:

Արևմտահայ բարբառների բնաջնջումը ոչ միայն հայերենի յուրահատուկ ենթահամակարգերի վերացում, ամբողջական լեզվական օրգանիզմի կենսական նշանակություն ունեցող մասերի խոշտանգում ու անդամատում էր, այլ նաև՝ լեզվական մեծ հարստության ոչնչացում: Անդառնալի կորստի են մատնվել անհետացած բարբառների բառապաշարային հարուստ շերտեր, բարբառային հայերենը կորցրել է հնչյունաքերականական շատ հատկանիշներ<sup>30</sup>, ընդհանուր հայերենը զրկվել է սնուցող բազում երակներից:

---

<sup>30</sup> Նկատի ունենք միայն անհետացած առանձին բարբառներին, բարբառների խմբերին հատուկ բառապաշարային ու հնչյունաքերականական հատկանիշները, որոնք առատորեն ներկայացված են բարբառներին նվիրված մենագրություններում, բարբառագիտական այլ աշխատանքներում:



Եղեռնագործության դատապարտումից հրաժարումը, պատմական իրադարձությունների միտումնավոր և կեղծ մեկնաբանությունները ճանապարհ են բացում նորանոր քաղաքակրթական հանցագործությունների և ցեղասպանությունների համար: Արևմտյան քսանից ավելի բարբառների կորստից հետո հայերենը 20-րդ դարի ընթացքում ունեցավ նաև արևելյան բարբառների կորուստ՝ այս անգամ արդեն Ադրբեջանին բռնակցված բուն հայկական, նաև հայաբնակ ու հայախոս այլ տարածքներում իրականացվող ցեղասպանական քաղաքականության հետևանքով: 1911 թվին գրած իր «Հայ բարբառագիտության» մեջ Հ.Աճառյանը արևելյան բարբառների շարքում ներկայացնում է նաև Ագուլիսի և Շամախիի բարբառները: Մասնավորապես, Շամախիի բարբառի մասին նա գրում է. «Այս բարբառը կը խօսուի գլխաւորապէս Շամախի քաղաքին մէջ և անոր մօտակայ քանի մը գիւղերը՝ մինչև Ղուբա: ... Բագուի մէջ ևս կայ Շամախեցի գաղութ մը՝ որ իր բարբառը կը գործածէ...: Բագուի մօտ կը գտնուի Էրմէնի քեանդ (Հայոց գիւղ), որ մեծաւ մասամբ Շամախեցիներէ կը բաղկանայ և նոյն բարբառը կը խօսի»<sup>31</sup>: Իսկ Ագուլիսի բարբառով խոսում էր Նախիջևանի հայության մի մասը. «Ագուլիսի բարբառը կը տարածուի Նախիջևանի մօտ փոքր սահմանի մը մէջ, որուն կեդրոնն է Ագուլիս գիւղաքաղաքը. շրջակայ գիւղերն են Յոնա, Հանդամէջ, Տանակերտ, Ռամիս, Դաշտ, Քաղաքի և այլն. ասոնք բոլորը նոյն բարբառին ճիւղերը կը ներկայացնեն»<sup>32</sup>: Նախախորհրդային և խորհրդային տարիներին ողջ Ադրբեջանի տարածքում կիրառվող հայահալած քաղաքականության, ջարդերի հետևանքով, ապա և դարաբաղյան իրադարձությունների ընթացքում կազմակերպված տեղահանումների ու կոտորածների արդյունքում այդ երկրում այլևս հայեր չեն ապրում, և կորստի են մատնվել ոչ միայն Ագուլիսի և Շամախիի բարբառները, այլ նաև Ղարաբաղի բարբառի Գանձակի և Ղազախի ենթաբարբառները<sup>33</sup>, հայաբնակ բազմաթիվ բնակավայրերի խոսվածքներ:

<sup>31</sup> Աճառյան Հ., 1911, 76:

<sup>32</sup> Նույն տեղում, 93:

<sup>33</sup> Մրանց մասին՝ Աճառյան Հ., 1911, 70:

Այսպիսով, ցեղասպանական քաղաքականության ու եղեռնի՝ հայոց լեզվին պատճառած վնասներն ու կորուստները կարելի է հանգեցնել հետևյալին.

1. Գրական արևմտահայերենի հայրենագրկում, միասնական գործառության և զարգացման հնարավորության վերացում, գրական լեզվին հատուկ գործառույթների մեծ մասի իրականացման անհնարինություն, օտար միջավայրերում երկրորդական և աստիճանաբար մոռացվող լեզվի կարգավիճակով դրսևորում.
2. Գրական հայերենի երկու ճյուղերի՝ իբրև մեկ ամբողջության միասնական զարգացման, մերձեցման, փոխհարստացման հնարավորության նվազեցում.
3. Բարբառային հայերենի երկու տասնյակից ավելի ենթահամակարգերի (բարբառների) վերացում հայության բնաջնջմամբ, տեղահանմամբ, բռնի մահմեղականացմամբ, ուժացմամբ.
4. Հայերենի մի շարք բարբառների հայրենագրկում, դրանց գոյության ու գործառության պայմանների բռնի փոփոխություն.
5. Բարբառների կորստով պայմանավորված՝ հայերենում իբրև բարբառային հատկանիշներ հանդես եկող հնչյունաքերականական բազմաթիվ իրողությունների կորուստ.
6. Բարբառների հետ միասին բառապաշարային տարբեր շերտերի, լեզվամտածողության, լեզվամշակույթի յուրահատուկ ու ինքնատիպ դրսևորումների, լեզվական գանձարանի անդառնալի կորուստ:

Ի վերջո, հայերենին եղեռնի պատճառած կորուստները ոչ միայն բեկեցին մեր լեզվի զարգացման բնականոն ընթացքը, այլ նաև զգալի վնաս հասցրին մարդկային լեզվին ընդհանրապես:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Աճառյան Հ.**, - Հայ բարբառագիտություն, Մոսկվա – Նոր-Նախիջևան, 1911:
- Աճառյան Հ.**, - Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 2013:
- Ավետիսյան Յու.**, - Հայոց լեզվի և խոսքի մշակույթ, Գիրք Ա, Եր., 2014:
- Բաղդասարյան-Թափալցյան Ս.**, - Մշո բարբառը, Եր., 1958:
- Էմինեան ազգագրական ժողովածու**, հ. 8, Մոսկվա – Նոր-Նախիջևան, 1911:
- Խաչատրյան Վ.**, - Վարդենիսի բարբառը, Եր., 2004:
- Հարությունյան Հ.**, - Նոր Բայազետի գավառը 1828-1913թթ., Եր., 2008:
- Մելքոնյան Ա.**, - Ազգաբնակչության տեղաշարժերը Էրզրումի նահանգի Բայազետ, Դիադին, Խամուր, և Ալաշկերտ գավառներում 19-րդ դ. Առաջին երեսնամյակին, ԼՀԳ, 1988/5:
- Մկրտչյան Հ.**, - Կարնո բարբառը, Եր., 1952:
- Չոլաքեան Յակոբ**, - Քեսապի բարբառը, Եր., 2009:
- Պետոյան Վ.**, - Սասունի բարբառը, Եր., 1954:
- Ջահուկյան Գ.Բ., Աղայան Է.Բ., Առաքելյան Վ.Դ., Քոսյան Վ.Ա.**, - Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Եր., 1980:
- Ջահուկյան Գ.Բ.**, - Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972:
- Վարդանյան Ս.**, - Թուրքիայում բնակվող համաշխարհային արդի լեզվավիճակը, Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ (միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Եր., 2014:

**VIKTOR KATVALYAN**

*PhD in Phylology  
Institute of Language after H. Acharyan of NAS, RA  
viktor-katvalyan@mail.ru*

## **THE GENOCIDE AND THE ARMENIAN LANGUAGE**

The genocidal policy realized by the Ottoman Turkey and the Genocide of 1915 caused onerous losses to the Armenian language.

In the 19th and early 20th centuries, the Armenian language was represented by two literary branches of East Armenian and West Armenian with approximately forty dialects. The Armenian intelligentsia of those times discussed the problem of unification of two branches of the Armenian, moreover, the unification of these two variants and lingual unity should have result in parallel and united development, regulation and co-enrichment of both variants.

The dialectical Armenian functioned both in Armenia, and out of its borders. In 1911, in his work called “Armenian Dialectology”, H. Acharyan mentioned places of Armenian residences also in Georgia, Aghvank (Baku, Shamakhi, Nukhi, Zakatala and others with their numerous villages), North Caucasus, Tatarstan, Crimea, European countries, India and Persia, Syria and Lebanon, Cilicia and other places. Out of Armenia, great numbers of Armenians were residing in Asia Minor. In the Ottoman Empire (either in main Armenian territories, or other places) the Armenian language also suffered a lot because of permanent persecutions, massacres, religion changes and alligation. Before the Genocide, many parts of Armenia under Turkish domination already lost the native language and became Turkish-speakers. Different Armenian dialects also became victims of the Genocide with millions of Armenians. The Western Armenia and Armenian-populated places of Turkish Empire not only deserted, but also lost the Armenian language.

The literary Western Armenian spread all over the world losing the possibility of united functioning, development, regulation, and its several important functions. The possibility of harmonic functioning and development of the common literary Armenian was also lost, and the problems of co-enrichment and unification of both branches stayed not solved.

In the result of the Genocide, about a decade of Armenian dialects, having specific phonetic and grammatical structure and vocabulary, disappeared. H. Acharyan distinguished about two and a half decade of dialects in the territory of Ottoman Empire (including also Western Armenia and Cilicia) before the Genocide. At present, the dialects of Karin, Mush, Sasun, Diadin, Hamshen and Bayazet continue functioning, but out of their cradle.

In fact, mainly those Western Armenian dialects were generally rescued from the lost, which began to function also in Eastern Armenia and Caucasus because of the deportations of Armenians before the Genocide.

During the 20<sup>th</sup> century the Armenian language also lost some of its eastern dialects. In pre-soviet and soviet years, the dialects of Agulis and Shamakhi, sub-dialects of Gandzak and Ghazakh of the dialect of Karabakh, many types of colloquial speech suffered in the result of persecutions, massacres in Azerbaijan, as well as in the result of deportations and hacks during the Karabakh events.

So, the damages and losses of the genocidal policy and the Genocide itself caused to the Armenian Language, can lead into the following:

1. Dispossession of the literary Western Armenian, abolition of the possibility of united functioning and development, impossibility of great part of realization of functions specific to the literary language, being considered as a secondary and gradually forgotten language in foreign surroundings;
2. Reduction of possibility of united development, co-enrichment of two branches of literary Armenian as one language;
3. Abolition of more than two decade of sub-systems (dialects) of the dialectical Armenian with demolishing, deportation, forcible islamization, and assimilation of the Armenians;
4. Dispossession of a series of dialects of the Armenian, forcible change of conditions of their existence and functioning;
5. In connection with the loss of dialects, a loss of different phonetic and grammatical realities, performing as dialectical features of the Armenian;
6. Together with dialects, an irrevocable loss of lingual treasury of different vocabulary layers, linguistic mentality, specific and original manifestation of linguistic culture.

**ВИКТОР КАТВАЛЯН**

*Кандидат филологических наук  
Институт языка НАН РА имени Р. Ачаряна  
viktor-katvalyan@mail.ru*

## **ГЕНОЦИД И АРМЯНСКИЙ ЯЗЫК**

В результате геноцида 1915 г. со стороны Османской империи армянский язык понёс тяжёлые потери.

На рубеже XIX – XX вв. армянский язык имел две ветви: Восточный армянский и Западный армянский. Готовилась реформа по объединению этих двух ветвей.

В различных областях проживания армян в Османской империи и на собственно армянских территориях, и на других, функционировали многочисленные диалекты армянского языка. Армянский язык понес тяжёлые потери в результате преследований, резни и религиозных изменений. Многие армяне стали туркоязычными. Многие территории проживания армян были преданы запустению.

В процессе рассеяния армян по всему миру после Геноцида, возможности слияния двух ветвей языка были утеряны.

Многие диалекты западноармянского языка исчезли, и в настоящее время функционируют лишь некоторые из них. Тяжёлые потери понесли также и восточно-армянские диалекты.

Последствия геноцида, коснувшегося и армянского языка, можно резюмировать следующим образом:

1. Патрицид литературного армянского языка, лишение возможности совместного функционирования и развития двух его ветвей, невозможность осуществления большинства его функций, а в инонациональных условиях — функционирование в статусе второстепенного и уходящего в забвение языка.
2. Сужение возможности сближения двух ветвей литературного армянского языка, их взаимообогащения и совместного развития в качестве единого целого.

3. Исчезновение более двух десятков армянских диалектов, по причине депортации, насильственной исламизации и ассимиляции армянского населения.
4. Патрицид целого ряда армянских диалектов, насильственное изменение условий их существоования и функционирования.
5. Потеря, вследствие исчезновения диалектов, многочисленных фонетико-грамматических реалий, выступающих в качестве диалектных атрибутов.
6. С потерей диалектов – необратимая утрата различных лексических слоёв языкового мышления, характерных и оригинальных проявлений языковой культуры и сокровищницы языка.